Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Զրէ

Վ. ԽՈՒՑԻԵՎ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՀՈՒՇԱՏԵՏՐ

ՀԱՅԱՄԹԵՐՈՒՄՆԵՐԻՆ ՈԺԱՆԴԱԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻՆ

Թիֆլիս—1931

С 32-К
А 297

381.6
խ-98

381.6
Ա-98

Տպ. Ա. Ֆ. Մյասնիկյանի անվան „Զարյա Վոստոկա"-ի Թիֆլիս
Պատվեր 2096 Գլավլիտ 1502 Տիրաժ 500.

БИБЛИОТЕКА
06 APR 2010
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

1931 թվի հացամթերման կամպանիայի հիմնական խնդիրը Անդրկովկասում կայանում է նրանում, որ՝ անցյալ տարիների հետ համեմատած՝ այս տարի մթերման պլանի իրացումը պիտի վերջանա ժամկետին:

Այդ խնդրի լուծումը պահանջում է մեծ չափով լարել ամբողջ մթերող ապարատի ուժերը և, դրա հետ միաժամանակ, խելացի ու ճկուն կերպով ոգտագործել այն տնտեսական հնարավորությունները, որոնք գտնվում են պետության տրամադրության տակ՝ հացամթերման գործին ոժանդակելու համար:

Ինդուստրիալիզացիայի բարձր ու աջող իրականացնող տեմպերը հնգամյակի յերրորդ վճռական տարում հացամթերումների առջև դնում են մեծ պահանջներ և նրանց տալիս խոշոր նշանակություն՝ «հնգամյակը չորս տարում» լոզունգը իրականացնելու համար:

Հացամթերումները սոցիալիզմի համար մղվող պայքարի մարտական փրոնտն է—ահա կամպանիայի լոզունգը

Հացամթերումների աջող իրականացումը պահանջում է կուսակցական, խորհրդային, արհեստակցական կազմակերպությունների և գյուղի ամբողջ հասարակայնության ամենալայն մասնակցությունը:

Կոլխոզների և սովխոզների արագ աճն Անդրկովկասում, ցանքի տարածության ընդլայնումը հիմք են տալիս հացամթերումների պլանը նշանակալից չափով բարձրացնելու համար: Հացամթերման կամպանիան ընթանալու յե գյուղում դասակարգային կատաղի պայքարի պայմաններում: Հացամթերումն անցկաց-

55.098

14.05.2013

նելու ժամանակ այդ դասակարգային պայքարը գյուղում պիտի հաշվի առնի գյուղի ամեն մի աշխատավոր և վճռական պայքար մղի կուլակության դեմ: Կուլակները փայլուն կերպով հասկանում են, վոր հացը հանդիսանում է յերկիրն աջող ինդուստրացման յենթարկելու ամենակարևոր լծակը: Կուլակները գիտեն, վոր պետության ձեռքում մեծ քանակությամբ հացի պաշար ունենալը հնարավորություն է տալիս արագացնելու դործարանների ու զավոդների շինարարությունը:

Այդ պատճառով նրանք կատաղի պայքար են մղում Սովետային իշխանության ու կուսակցության կողմից ձեռնարկած բոլոր միջոցառումների դեմ:

Կուլակն իր ամբողջ ույժերը կտրամադրի կոլխոզների զարգացման դեմ մղվելիք պայքարին: Այդ պատճառով մենք ավելի պիտի ուժեղացնենք բոյշևիկյան կրակը դեպի կուլակը և լիկվիդացիայի յենթարկենք նրան, իբր դասակարգի, համատարած կոլեկտիվացման բազայի վրա:

Կուլակի դեմ մղված պայքարում գլխավոր խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի մենք ունենանք գյուղացիական չքավորության և միջակների միահամուռ ֆրոնտ:

Հացամթերման շրջանում դասակարգային պայքարի սրումը հրապարակ կգա շատ ակներև կերպով: Կուլակը կփորձի հացամթերումներին դեմ դուրս գալ: Կուլակության այդ փորձին պետք է պատասխանել բոյշևիկյան վարքագծով, հակադրել նրան գյուղի չքավոր – բատրակ միջակ և կոլխոզնիկների հասարակական կազմակերպվածությունը, վորպեսզի կարելի լինի վճռականապես հարվածել կուլակին, կոտրել նրա դիմադրությունը և սարոտաժ անելու տրամադրությունը:

Գյուղական հասարակայնությունը պատրաստ պիտի լինի հակահարված տալու կուլակի հենց այն առաջին փորձին, վորը նպատակ կունենա տապալելու հացամթերման պլանը: Կուլակի հակահարձակման անցնելու հնարավոր փորձերին պետք է պատասխանել բատրակ – չքավոր և միջակ մասսաների և կոլխոզնիկների միաձուլումով և պետք է ավելի ուժեղ հարձակում գործել նրա վրա: Եթե կուլակը մթերման ռայոններում քայքայիչ աշխատանք տանի, ապա նրա նկատմամբ պետք է գործադրել ճնշում և ստիպողական միջոցներ: Եթե կուլակը փորձի իր յետևից տանել յենթակուլակներին՝ բատրակների, չքավորների և միջակների դեմ, ապա նրա հետ պետք է խոսել պրոլետարական դիկտատուրայի լեզվով:

Ամենամեծ չափի աշխրջությունը դեպի դասակարգային թշնամու – կուլակության փորձերը՝ խանդարելու հացամթերման աջող իրացումը, ուշադրությունը դեպի միջակային տնտեսությունը, նրա նկատմամբ վոչ մի «ձախ» խոտորում թույլ չտալը, դասակարգային ճիշտ դծի գործադրում և վճռական պայքար աջ և «ձախ» ոպորտունիզմի դեմ, չքավոր մասսաների, կոլխոզնիկների և ամբողջ գյուղական հասարակայնության լայն մոբիլիզացիա՝ հացամթերումներն անցկացնելու համար և կուլակային ագիտացիան կանխող լայն բացատրական աշխատանք—ահա հացամթերման ֆրոնտում լիակատար հաղթանակ տանելու ամենալավ միջոցը:

Հացամթերումներին ամենորյա աջակցություն ցույց տալու և հացամթերման բնագավառում կառավարության տված դիրեկտիվներն իրացնելու համար հասարակական կազմակերպությունների (չքավորական խմբակներ ու ժողովներ, միջակների ու չքավորների ակտիվ) կողմից ցուցադրվող նախաձեռնությանն ամեն կերպ աջակցելու նպատակով, հացամթերման ռայոններում գյուղխորհուրդներին կից կազմակերպվում են հացամթերմանն աջակցող հանձնաժողովներ:

Աջակցող հանձնաժողովներն ընտրվում են գյուղի չքավոր – միջակների ժողովներում:

Այդ հանձնաժողովների ընտրելը գյուղխորհուրդներին ու հացամթերող կազմակերպություններին

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՌ-Արմ.ССР
Ս. Սահմ. Ա...

59839-66

հացամթերման պլանի իրացման համար ընդհանուր պատասխանատվությունից չի ազատում:

Աշակցող հանձնաժողովները հանդիսանալու յեն այն շտաբը, վորի շուրջը մոբիլիզացիայի յեն յենթարկվելու գյուղի հասարակայնության ամբողջ ուժերը:

Աշակցող հանձնաժողովների պարտականությունների մեջ է մտնում—ոգնություն ցույց տալ հացանասնաբուծական կոոպերացիայի և Սայուզխլեբին՝ նրանց հացամթերման աշխատանքում և իրականացնել համարձակ ինքնաքննադատությունը՝ նրանց գործունեության մեջ նկատվող թերությունները վերացնելու համար:

Աշակցող հանձնաժողովները պիտի հիշեն, վոր այս նոր կամպանիայում ամբողջ ուշադրությունը դարձնվելու յե նրա վրա, վոր կամպանիան չձգձգվի ամբողջ տարին, այլ վերջանա յերեք ամսվա ընթացքում:

Գյուղական հանձնաժողովները պիտի հետևեն, վորպեսզի վորոշված նորմաներով պետությանը հանձնվելիք (ծախվելիք) հացը ժամանակին հանձնվի հացահավաք կետերին:

Հանձնաժողովի անդամները հանդիսանում են գյուղխորհուրդների լիազորը՝ տվյալ գյուղխորհրդի հողամասում անցկացվող ամբողջ հացամթերման աշխատանքի բնագավառում:

Հանձնաժողովի անդամները հանդիսանում են գյուղխորհրդի հողամասում անցկացվող ամբողջ հացամթերման աշխատանքի բնագավառում:

Աշակցող հանձնաժողովներն ակտիվ մասնակցություն են ցույց տալիս գյուղխորհուրդների աշխատանքներին՝ տվյալ գյուղխորհրդի կողմից ընդգրկվող գյուղերում, բերքի գրությունը և ապրանքային հացի ավելցուկը պարզելու գործում:

I.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Գյուղական աշակցող հանձնաժողովները պիտի պահովեն ամենալայն ագիտացիոն-բացատրական

աշխատանքը գյուղում՝ մթերումների պլանի լրիվ իրացման, ամբողջ ապրանքային հացի ավելցուկը պետությանը հանձնելու (ծախելու) համար:

Այդ հասարակական-մասսայական աշխատանքում աշակցող հանձնաժողովները պիտի ներգրավեն գյուղխորհուրդների և կոլխոզների ամբողջ ակտիվին, ամբողջ կոոպերատիվային, կանանց ու կոմյերիտական ակտիվին, գյուղական չքավորական խմբակներին և գյուղացիական փոխադարձ ոգնության կոմիտեներին (փոկեր):

Ագիտացիոն-բացատրական կամպանիան անցկացնելու ժամանակ, աշակցող հանձնաժողովներ պիտի ոգտագործեն գյուղի կուլտ-կրթական աշխատանքի բոլոր ձևերը, ինչպես որինակ՝ պատի թերթեր, կինո, ռադիո, հացը հանձնողների հետ զրույցների կազմակերպում, մասսայական գրականություն:

Ամենամեծ չափով պիտի ոգտագործվեն գյուղական բոլոր կուլտ-կրթական կազմակերպությունները, ինչպես որ. ակումբներ, դպրոցներ և լիկկայաններ:

Աշակցող հանձնաժողովի անդամները պիտի հիշեն ու գիտենան, վոր մենք հանդիսանում ենք վկաներն ու մասնակիցները, մի կողմից չքավորության ու միջակության դեպի կոլխոզներն ընթացող մասսայական շարժման, գյուղական տնտեսության՝ նոր տեխնիկական բազայի հիման վրա վերակառուցման և մյուս կողմից՝ մեր դասակարգային թշնամիների՝ կուլակների, սպեկուլյանտների, մնասարարների և այլոց՝ խորհրդային իշխանության և կուսակցության կողմից գյուղում կիրառվող բոլոր միջոցառումներին կատաղի դիմադրության:

Պետք է գիտենալ, վոր դասակարգային թշնամին միշտ բացեիբաց դեմ չի յելնում:

Նոր սկսվող հացամթերման կամպանիան գյուղական ակտիվիստների առջև կդնի մի շարք նոր ու կարևոր պահանջներ:

Անցյալ տարիները ցույց տվին, որ ակտիվիստը իսկապես հանդիսանում է սոցիալիստական շինարարության առաջավոր մարտիկը: Նա որինակ է ծառայում գյուղի մնացած ամբողջ մասսային:

Բայց ակտիվիստների մեջ էլ կան այլանդակներ: Նրանց մեջ կան աչքակապիչները, վորոնք խոսքով ագիտացիա յեն տանում հոգուտ սոցիալիստական միջոցառումների, բայց գործնականում հենց իրենք չեն կատարում:

Այդպիսիները ակտիվներ կոչվել չեն կարող: Նրանք կեղծ ակտիվիստներ են: Աջակցող հանձնաժողովները դրանց նմաններին պիտի մերկացնեն, իբր սոցիալիստական շինարարությանը վնաս տվողների:

Գյուղական հանձնաժողովի անդամները պիտի գիտենան, թե ինչ քաղաքականություն են գործադրում կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը սոցիալիստական շինարարության գործում:

Բացատրեցեք չքավորներին ու միջակներին գյուղական տնտեսությունը կոլեկտիվացման յենթարկելու ուղղությամբ կուսակցության ու խորհրդային իշխանության կողմից գործադրվող միջառումները և պարզեցեք կոլխոզի առավելությունը՝ անհատական տնտեսությունների հանդեպ:

Կազմակերպեցեք ձեր շուրջը գյուղի չքավոր-միջակ մասսաներին:

Վոչ թե խոսքով, այլ ձեր գործունեությամբ ցույց տվեք կուսակցության ու խորհրդային իշխանության ցուցմունքների ամենալավ իրականացման օրինակը:

Հետեվեցեք, վորպեսզի կոնտրակտ կնքած անհատականներն ու կոլխոզները ժամանակին և վորոշված նորմաներով հանձնեն հացը:

II

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒԼԱԿԻ ՎՐԱ ՀԱՑԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հետևեցեք, վոր կուլակությունը հանձնի իր ամբողջ հացի ավելցուկը բերքահավաքից անմիջապես հետո, կայուն առաջադրությունների համաձայն:

Կուլակը պարտավոր է առանց այլևայլության հանձնել իր այն բոլոր ավելցուկը, վորը կվորոշի գյուղխորհուրդը:

Կասկած չկա, վոր կուլակը կթաքցնի իր ցանքերը, կպակասեցնի բերքն ու հացի ավելցուկը:

Պետք է մերկացնել իմանալ նրա գործունեությունն ու առաջն առնել:

Մշտապես ու սիստեմատիկ կերպով հսկեցեք ու ստուգեցեք, թե ինչպես են կատարում կուլակները հացը հանձնելու իրենց առաջադրությունները:

Հացի ավելցուկները թաքցնելու համար կուլակներին պետք է խիստ պատասխանատվության յենթարկել:

Հնարավորություն չպետք է տալ կուլակներին, վորպեսզի նրանք կարողանան ընդլայնել իրենց հակախորհրդային գործունեությունը:

Կուլակների նկատմամբ հաշտվողական վերաբերմունք ունենալը վնասակար է. այդ վերաբերմունքը հասցնում է դասակարգային պայքարը սվաղելուն և թուլացնում է մեր դիրքերը գյուղում:

Վոչ մի զիջողություն կուլակի նկատմամբ՝ ընդհակառակը, նրա վրա ճնշում գործ դնելու համար կազմակերպեցեք գյուղի հասարակայնությունն ու ամբողջությամբ ոգտագործեցեք խորհրդային որենսդրականությունը:

Կուլակներից հացն ստանալու և գյուղական հասարակայնությունը կուլակության դեմ կազմակերպելու աշխատանքը ձեր ուշադրության կենտրոնում ունեցեք:

Դաժան պայքար մղեք հացը հանձնելուց խուսափողների դեմ:

Աջակցող հանձնաժողովնե՛ր, իմացեք, վոր լավ է աշխատում վոչ թե այն հանձնաժողովը, վորը ղեկավարում է հրահանգի «այստեղից մինչև այստեղ»-ով, այլ այն հանձնաժողովը, վոր նախաձեռնություն հրապարակ բերելով, վոգևորություն է առաջ բերում գյուղի առաջավոր տարրերի մեջ հացամթերման շուրջը:

Աջակցեցեք, վորպեսզի գյուղի համար վորոշված հացամթերման պլանն իրացվի և գյուղացիության առանձին կատեգորիաների նկատմամբ (չքավորներ, միջակներ և կուլակներ) խիստ կերպով պահպանվի դասակարգային մոտեցումը:

Պարզեցեք, թե ինչպես է նախապատրաստված տեղական հացամթեող ապարատը՝ հացն անընդհատ մթերելու և ընդունելու համար:

Հետևեցեք, թե ինչպես են իրացվում հացամթերումները, մթերման պլանի վերաբերյալ դիրեկտիվները և վորքան ճիշտ են կատարվում հանձնվող հացի վորակի համար արվող զեղջերն ուհավելումները:

III

ՄԱՍՍԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Աջակցություն ցույց տվեք գյուղխորհուրդներին և այլ որգաններին, յերբ նրանք առանձին տնտեսություններից գանձում են սերմացուի վարկի և այլ պարտավորություններով հանձն առած պարտքերը:

Անմիջական մասնակցություն ցույց տվեք գյուղացիության կողմից հացի կոլեկտիվ հանձնում կազմակերպելում, կարմիր սայլաշարքեր ստեղծելում, առանձին գյուղերի, ռայոնների և գյուղացիների առանձին խմբերի միջև սոցմրցում անցկացնելում՝ վորպեսզի նրանք իրենց հացի ավելցուկը շուտ և լրիվ կերպով հանձնեն:

Լուրջ ուշադրություն դարձրեք անհատ գյուղացիների և կուլակների կողմից հացը հացահավաք կետերին հասցնելու համար կարմիր սայլաշարքեր կազմակերպելուն:

Թույլ չտաք կուլակներին մասնակցելու կարմիր սայլաշարքերին, վորպեսզի չքավոր-միջակ մասսաների մխաձուլման, ինչպես և սայլաշարքերի քաղաքական նշանակությունը:

Սայլաշարքը կազմակերպելուց առաջ, աջակցող հանձնաժողովը պետք է կազմակերպեն հասարակական ուժությունը կարմիր սայլաշարքի մասնակիցներին, ինչպես և համաձայնության գան հացահավաք կետերի հետ՝ սայլաշարքին հանդիպելու և նրանից հացն ընդունելու համար կետը տեխնիկապես պատրաստ ունենալու վերաբերյալ:

Աջակցեցեք հացի սպեկուլյանտների դեմ վճռականապես պայքարելու համար գյուղացիական հասարակական մասսաներին մոբիլիզացիայի յենթարկելու գյուղխորհրդի ձեռնարկած միջոցառումներն անցկացնելու գործում:

Մոբիլիզացիայի յենթարկեք գյուղի ամբողջ ուժերը չքավորների ու միջակ գյուղացիության մեջ հասարակական կարծիք ստեղծելու համար կուլակային սպեկուլյացիայի և կուլակային ագիտացիայի դեմ:

Լայն կերպով պարզաբանեցեք, թե հացի սպեկուլյացիան ինչ վնաս է հասցնում գյուղացիությանն ու ժողովրդական ամբողջ տնտեսությանը:

Բացատրեցեք, վոր հացի գների սպեկուլյատիվ բարձրացումը, կուլակ-ուռճացած շերտերի կողմից հացի թաղցնելը հարված է հասցնում գյուղի չքավորության, չքավոր-միջակ մասսաների միության:

Ոգևորեցեք բացատրելու և համոզելու մեթոդներից և վճռականապես խուսափեցեք հրամաններ արձակելուց և ամեն տեսակի խոտորումներից:

Հանձնաժողովները պիտի իմանան, վոր ամենաթույլ տատանումը, անհամոզվածությունն ու անվճռականությունը գործունեության մեջ կոգտագործվի դասակարգային թշնամի կուլակի կողմից:

Ձեռ աշխատանքներում ղեկավարվեցեք կուսակցության դիրեկտիվային ցուցմունքներով և աշխատան

քը շաղկապեցեք կուսակցական բջիջի, գյուղխորհրդի, կոմյերիտմիության, կոլխոզի և պրոֆկազմակերպությունների հետ:

Ձեր աշխատանքներում հենվեցեք տեղական կազմակերպությունների ոժանդակության և չքավորական խմբակների ոգնության վրա. տարեք վճռական, անխնա պայքար կուլակի դեմ, նրա նկատմամբ դործադրելով հաստատուն դասակարդային դիծ, առանց վորևէ սիրաշահության:

Կոլխոզնիկները հանդիսանում են խորհրդային իշխանության իսկական ու կայուն հենակետը գյուղում:

Իրենց հացի ապրանքային ավելցուկը հանձնելում խոշորների համար կետի կողմից և այն չափով, վորքան վորոշված է նրանց համար:

Սիստեմատիկ կերպով հսկեցեք, վորպեսզի կոլխոզները հացը տանեն հանձնելու Սայուզխլեբի այն հացահավաք կետին, վորին կցված է կոլխոզը և այն որացույցային ժամկետներում, վորոնք վորոշված են կոլխոզների համար կետի կողմից և այն չափով, վորքան վորոշված է նրանց համար:

Բացի իրենց հացի ամբողջ ավելցուկը ժամանակին պետությանը հանձնելուց, կոլխոզները ոգնելու յեն նաև ձիերից զուրկ անհատական տնտեսություններին, առաջին հերթին չքավորությանը՝ հացը հացահավաք կետերը հասցնելու դործում, տրամադրելով այդ նպատակի համար կոլխոզի փոխադրական միջոցները և տարան:

Ամենաակտիվ, դործնական մասնակցություն ցույց տվեք չքավորության համար այդ ոգնությունը կազմակերպելու դործում:

Մշտապես հետևեցեք և ստուգեք՝ արդյոք ժամանակին ու ճիշտ ժամկետնե՞րին են իրականացնում կոնտրակտանները իրենց պայմանագրային պարտավորությունները՝ հացի ավելցուկը հացահավաք կետերին հանձնելու բնագավառում:

Յեթե կոնտրակտանտները խուսափում են իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց, ապա այդ անճշտապահ տնտեսությունների նկատմամբ անմիջապես հասարակական ազդեցության միջոցներ ձեռք առեք:

Բացատրեցեք կոնտրակտանտներին, վոր նրանք հացն առաջին հերթին հանձնում են պետությանը այն քանակությամբ, ինչ քանակություն մատնացույց է տրված կոնտրակտացիոն պայմանագրերում:

IV

ՏԵՄՊԵՐԸ ԲԱՐՁՐ ՊԱՀԵԼ

Բացատրեցեք կոնտրակտանտներին, վոր կոնտրակտացիոն պայմանագիրը դյուղացիական տնտեսության համար ամենակարևոր փաստաթուղթն է հանդիսանում. այսինքն՝

ա) Կոնտրակտացիայի պայմանագիրը յերկրամի պայմանագիր է հանդիսանում:

բ) Խորհրդային իշխանությունը լայն ոգնություն է ցույց տալիս այն տնտեսությունների զարդացմանը, վորոնք կոնտրակտացիայի պայմանագրեր ունեն կնքված:

գ) Պայմանագրի համաձայն, կոնտրակտանտները ստանում են ագրոնոմիական և տեխնիկական ոգնություն, դրամական կանխավճարներ և կարող են ստանալ իրենց տնտեսության համար անհրաժեշտ դյուղատնտեսական մեքենաներ:

Աջակցող հանձնաժողովները պիտի հիշեն, վոր այս տարի նրանց աշխատանքի ձևերն ու մեթոդները պիտի լիակատար կերպով համաձայնեցվեն հացամբարման նոր մեթոդներին:

Հաշվի առեք, վոր հացամբարման դյուղական պլանը իրացնելու յե լայն մասսայական հասարակական աշխատանքի կարդով և դյուղի պլանը պիտի իրականացվի:

Եթե կոնտրակտանտը հրաժարվում է հացը հանձնել — այդ մասին անմիջապես հայտնեցեք գյուղխորհրդին և Խլեբժիվոտնովոդսոյուզին՝ հանցավորներին պատասխանատվության յենթարկելու համար, համաձայն կոնտրակտացիոն պայմանագրերի:

Աջակցող հանձնաժողովնե՛ր, հիշեցեք, վոր

«Անհատական տնտեսության հետ ուղիղ փոխհարաբերության հաստատումը, վորը հետադայում հեշտացնելու յե կոլլեկտիվացումը, նշանակալից չափով դառնում է կոլխոզնիկների և անհատականների փոխհարաբերության խնդիր» (ընկ. Յակովլև 16-րդ կուսհամագումարին):

Ահա թե ինչու աջակցող հանձնաժողովների աշխատանքները լինելու յեն հասարակական:

V

ԴԵՊԻ ՆՈՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐ

Ոգնություն ցույց տվեք կոլխոզների և առանձին գյուղերի միջև սոցիալիստական մրցում անցկացնելու մեջ:

Բացատրեցեք չքավորներին, միջակներին և կոլխոզնիկներին, վոր սոցմրցումը հնարավորություն է տալիս առանձնապես մատնանշելու՝ թե այն տնտեսությունները, վորոնք տապալում են հացամթերումներն ու յետ են մնում և թե այն տնտեսությունները, վորոնք գնում են առաջին շարքերում:

Գյուղում ոգտագործեցեք կարմիր ու սև տախտակները:

Ինքնին հասկանալի յե, վոր սև տախտակը հրապարակ կհանի նրանց, վորոնք հացամթերումների պլանը խախտելու փորձ անող կուլակին ոգնելով, քարշ են գալիս պոչից, նրանց, վորոնք իրենց հացի ավելցուկը ծախում են մասնավորներին, սպեկուլյանտներին և չարչիներին:

Յետ մնացող տնտեսությունների նկատմամբ աջակցող հանձնաժողովները ել ավելի ուժեղացնելու յեն իրենց բացատրական և ագիտացիոն աշխատանքը:

Յերբ աջակցող հանձնաժողովները կհամոզվեն նրանում, վոր տնտեսություններից մի քանիսը համառ կերպով ընդդիմանում են և չեն ուզում իրենց հացի ավելցուկը պետությանը վաճառել, ապա այդպիսիների նկատմամբ պետք է գործադրել՝

Հասարակական ազդեցություն՝ լայն բացատրական աշխատանքով:

Տևականորեն համառելու դեպքում, աջակցող հանձնաժողովներն ստիպված կլինեն ընդհանուր ժողովի առաջ հարց դնել այդ մասին:

Նման դեպքերում պետք է տանել լայն բացատրական աշխատանք, ուր պիտի պարզաբանվեն այն պատճառները, վորոնք ստիպում են գյուղական հասարակայնությանը դիմելու այդպիսի ծայրահեղ միջոցների:

Ուշադրություն դարձրեք, վոր կլինեն դեպքեր, յերբ գյուղի հացամթերման պլանը քննելիս, կամ աջակցող հանձնաժողովների հասարակական աշխատանքի հետևանքում չքավոր և միջակային տնտեսությունները կցանկանան իրենց ինքնապարտադրել հացի ավելցուկը պետությանը ծախելու ուղղությամբ:

Նման ինքնապարտադրումները, վորոնք բղխում են իրենց՝ գյուղացիության ցանկությունից, աջակցող հանձնաժողովների կողմից պիտի ամեն կերպ խրախուսվեն:

Հիշեցեք, վոր այդ կամավոր ինքնապարտադրումները վոչ մի դեպքում չպիտի փոխարինվեն պարտադիր առաջադրությունների սահմանումով:

Դա կլիներ «խոտորումների» ամենավատ տեսակը:

Յերբ չքավոր ու միջակային տնտեսությունները կամավոր կերպով վորոշում են ընդունում ինքնապարտադրման վերաբերյալ, ապա աջակցող հանձնաժողով-

ները հետևում են, վորպեսզի ամեն մի տնտեսություն հացահավաք կետին հասցնի հացի այն քանակը, ինչ քանակ վոր ինքը պարտավորվել է ծախել պետությանը:

Հաշվի առեք անցյալ կամպանիայի սխալները, յերբ հացամթերողները, ձգտելով շուտ վերջացնել պլանի իրացումը, վորոշ տեղերում (Վրաստան) պարզապես անճիշտ բացատրություններ եյին տալիս: Նրանք կոչ եյին անում գյուղացիությանը ծախելու պետությանը վոչ միայն հացի ավելցուկը, այլև այն հացի մի մասը, վորն անհրաժեշտ էր գյուղացուն իրեն ապրելու և սերմի համար:

Դրա փոխարեն նման տնտեսություններին նրանք խոստանում եյին, վոր պետությունը կոգնի նրանց ուտելու հացով գարնանը, մինչև նոր բերքի գալը:

Աջակցող հանձնաժողովները պիտի պարզ գիտենան, վոր նման բացատրություններն ու աշխատանքի նման մեթոդները քյալլադյողական են:

Աջակցող հանձնաժողովները պիտի դադարեցնեն վոչ ապրանքային հացի, այսինքն վոչ ավելցուկի մթերման ամեն մի փորձ:

Ոգնեցեք գյուղխորհուրդներին կուլակային տնտեսությունների ապրանքային ավելցուկները հրապարակ հանելու մեջ և գյուղխորհուրդներին տեղեկացրեք նրանցից այնպիսիների մասին, վորոնք խուսափում են հացը պետությանը հանձնելուց՝ դատական ազդեցության միջոցների դիմելու համար:

Ձեր աշխատանքում սերտ կապ պահպանեցեք գյուղական չեֆային բջիջի հետ, չեֆ ակտիվիստ-աշխատավորուհու և դեղջկուհի-պատվիրակուհու, լիազորի և կոոպերացիայի հետ:

Ոգնություն ցույց տվեք չեֆ ակտիվի հետ միասին չեֆային անկյունում տեղեկատու սեղաններ կազմակերպելուն և կազմակերպեցեք «պատասխաններ հարցերին» աշխատանքը, թե ի՞նչպես է կոլեկտիվացման

յենթարկված յենթաշեֆ ռայոնը, ի՞նչպես են ընթանում այնտեղ հացամթերումները և այլն:

Շեֆային անկյունը, բացի այն, վոր ագիտացիա յե մղելու գյուղի ամբողջ հասարակական ակտիվի մասնակցության համար, միաժամանակ և խարազանելու յե մթերման աշխատանքի բացասական օրինակները, կուսակցության և խորհրդային իշխանության գծի աղավաղման փաստերը մթերումների մեջ:

Աջակցող հանձնաժողովի անդամների մոտ կարող են գանգատներ գալ ռայոնական գործիչների վոչ ճիշտ գործունեյության վերաբերյալ:

Յուրաքանչյուր գանգատի լուծմանը և գանգատավորին մոտեցեք չափազանց զգույշ, լավ հասկացեք նրանց, նկատի ունենալով, վոր կուլակային տարրերն ու յենթակուլակները ձգտում են նրանց գանգատներն ոգտագործել և իրենց շահերին ծառայեցնել:

Հիշեցեք, վոր հացամթերումների անցկացումը զուգադիպում է մասսայական արձակուրդների և արձակուրդավորների գյուղ գնալու շրջանի հետ:

Կենդանի կապ հաստատեք արձակուրդավորների հետ և նրանց էլ ներգրավեք հացամթերման աշխատանքներում:

Աջակցող հանձնաժողովներն իրենց աշխատանքում պիտի վորոշ կարգ ու կանոն հաստատեն—պետք է աշխատանքի բաժանում կատարեն հանձնաժողովի առանձին անդամների մեջ, մտցնեն ինքնադիսցիպլինա, աշխատանքի մեջ ներգրավեն գյուղական ամբողջ ակտիվը:

Հանձնաժողովի առանձին անդամներ պիտի կցվեն հացամթերման աշխատանքի ամենակարևոր ճյուղերին. մասնավորապես

ա) Հանձնաժողովի մի անդամ ոգնելու համար կցվելու յե գյուղխորհրդին՝ հատկապես գյուղի հացամթերման իրացման հաշվառքի համար:

բ) Հանձնաժողովի մյուս անդամը հետևում և ոգնություն է ցույց տալիս կուլտ-կրթական աշխատանքին:

ՀՍՍՌ-Арм. ССР
Библиотека Института Востоковедения Академии Наук
им. А. Мясникяна

գ) Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամին հանձնարարվելու է, վորպեսզի նա հետևի հացն ընդունող կետի աշխատանքին և այն բանին, թե ինչպես են կուլակային տնտեսություններն իրացնում իրենց կայուն առաջադրությունները:

Հացամթերման ընդհանուր առաջադրությունները չիրացնող կամ պլանը կատարելուն խոչընդոտ հնդիսացող անձանց նկատմամբ հացամթերմանն աջակցող հանձնաժողովների այս կամ այն միջոցները ձեռք առնելու վորոշումները պիտի հաստատվեն գյուղխորհուրդների կողմից:

Աջակցող հանձնաժողովներն իրենց աշխատանքի մասին հաշիվ են տալիս գյուղխորհուրդներին:

ա) Դիտողություններ ու առաջարկներ են գետեղում պատի թերթերում:

բ) Անհրաժեշտ դեպքերում հաշիվ են տալիս գյուղացիների ընդհանուր ժողովներում, վորպեսզի գյուղացիական մասսաները տեղեկություն ունենան աջակցող հանձնաժողովի աշխատանքի մասին:

Աջակցող հանձնաժողովներն իրենց տեխնիկական ապարատը չունեն, այլ իրենց աշխատանքում ոգտագործում են գյուղխորհուրդների տեխնիկական ապարատը:

Աջակցող հանձնաժողովների կազմի մեջ պետք է ընտրել արդեն ստուգված և դասակարգային պայքարում կոփված գյուղի առաջադեմներից—կոլխոզիկների ու չքավոր-միջակային ակտիվի շարքերից:

Յենթակուլակները հանձնաժողովներում տեղ չունեն

Իրենց ամբողջ աշխատանքը մասսայական ակտիվության վրա հիմնելով, աջակցող հանձնաժողովները բացատրում են գյուղացիներին հացամթերման հսկայական նշանակությունը սոցիալիստական շինարարության աջողության համար, մոբիլիզացիայի յեն յենթարկում կոլխոզ. և չքավոր-միջակ գյուղացիության ուժերը՝ հացամթերումը ակտիվ կերպով անցկացնելու և աջող կերպով վերջացնելու համար, հետևում են հացամթերման ապարատի նորմալ աշխատանքին և, վերջապես, հացն ուղիղ ընդունելուն, ոգնում են կոլխոզներին հացամթերման խնդրում խաղալ առաջնակարգ դեր, ինչպես և ոգնում են կոլխոզների տնտեսական ամրապնդմանը:

Հիմնական խնդիրը կայանում է նրանում, վոր լավ կազմակերպելու միջոցով հացամթերման 1931 թ. պլանն Անպրկովկասում վոչ միայն կատարենք, այլ և գերակատարենք:

Հացամթերումները—ամենակարևոր քաղաքական ու տնտեսական կամպանիան է:

Վոչ մի դիջում դասակարգայի թշնամուն—կուլակին:

Հացամթերումներում վճռական պայքար աջ թեքման և «ձախ» խոտորումների ու նրանց հետ հաշտվողանների դեմ:

Վոչ թե հաշտվել թեքման արտահայտությունների հետ, այլ արմատահան անել նրանց:

«Ինքնահոսի» վրա վոչ մի հույս չդնել:

Ընդհակառակը, հացամթերման պլանն իրացնելու աշխատանքի համար ամենալայն մոբիլիզացիայի յենթարկել չքավորներին ու միջակներին, գյուղի ամբողջ ակտիվին ու հասարակայնությանը:

ՊԵՏ ԱՍՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС. Библиотека
ZUUՈ-Арм.ССР
Ա. ԱՄ. Մ. ՄՈՍԿՎԱ
Ա. ՄՈՍԿՎԱՅԻ ՄԵՍԱ
<< Ազգային գրադարան
NL0226441

55.098

Ա 32-Կ
297

ՑԱՆԿ

I. *Աշխատանքի ձևերն ու մեթոդները* . . . . 6 էջ

II. *Հասարակական ազդեցությունը կուլակի վրա՝ հացը հանձնելու համար* . . . . . . 9 »

III. *Մասսայականության համար* . . . . . . 10 »

IV. *Տեմպերը բարձր պահել* . . . . 13 »

V. *Դեպի նոր հաղթանակներ* . . . . 14 »

ՀՍՍՌ-Арм ССР